ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

01-ը հոկտեմբերի 2025թ.

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ
ՏԱՐԵՑՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի որոշմամբ հոկտեմբերի 1-ին ամբողջ աշխարհում նշվում է Տարեցների միջազգային օրը, որի կապակցությամբ ջերմորեն շնորհավորում եմ մեր ավագ սերնդի ներկայացուցիչներին: Օրը լավագույն առիթն է շնորհակալություն հայտնելու նրանց՝ տարիների հոգատարության, նվիրումի ու վաստակի համար, միևնույն ժամանակ հանրության ուշադրությունը հրավիրելու տարեցների կարիքներին ու խնդիրներին:
Առանձնահատուկ ուզում եմ անդրադառնալ Աբովյան համայնքի տարեցներին, որոնց բարձրաձայնած խնդիրները մշտապես ուսումնասիրվում են ոլորտային պատասխանատուների, Աբովյանի համայնքապետարանի սոցիալական ծրագրերի, առողջապահության և տեղեկատվության բաժնի կողմից և ստանում պատշաճ արձագանք:

Համայնքի մեծահասակների համար բարեկարգ և հարմարավետ միջավայրի ապահովումը իմ անմիջական ուշադրության կենտրոնում է. պարբերաբար այցեր և մրցաշարեր են կազմակերպվում Աբովյան քաղաքի տարեցների զբաղմունքի կենտրոնում, որտեղ ստեղծված են անհրաժեշտ պայմաններ տարեցների հանգստի և ժամանցի կազմակերպման համար:
Սիրելի՛ մեծահասակներ.
Յուրաքանչյուր օր դուք արժանի եք ուշադրության և հոգատարության, իսկ ձեզ նվիրված այս գեղեցիկ օրվա առիթով կրկին շնորհավորում եմ և մաղթում լինեք առողջ ու անհոգ, վայելեք արժանավայել ու բարեկեցիկ ծերություն՝ շրջապատված ընտանիքի, հասարակության ջերմ ու սրտացավ վերաբերմունքով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**